«ԵՐԵՎԱՆԻ Մ□ԻՇԽԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Տ Հ Տ

2022-2023

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(8-9 դասարանի աշակերտների համար)

(շաբաթական՝2 ժամ, I խումբ ,II խումբ ,տարեկան՝68 ժամ)

Google classroom և Microsoft Teams

(26 ժամ)

Նպատակը-ծանոթացնել սովորողներին նորագույն կրթական տեխնոլոգիաներին՝ ապահովելով դրանց կիրառության ուսուցումը:
Զարգացնել տեխնոլոգիական հմտությունները, ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները

Խնդիրներ -Ուսուցման համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում

Վերջնարդյունք- թվային առաջադրանքների ստեղծման արդյունավետ գործիքամիջոցների կիրառում:
Համակարգել, մեկնաբանել, ներկայացնել և վերլուծել բովանդակային տեղեկատվությունը
Կրթական կայքերի, կրթական ռեսուրսների կիրառում:
Google classroom կամ Microsoft Teams համակարգերում (ըստ ընտրության) ստեղծել և վարել հեռավար դասընթացներ

Բովանդակություն

1. Microsoft Teams, Google Classroom (4 ժամ)
2. Google forms testing, iSpring QuizMaker, Quizizz, Mentimeter) (4 ժամ)
3. Կիրառել կրթական գործունեության մեջ էլեկտրոնային կրթական կայքերի հնարավորությունները: (2 ժամ)
4. Classroom տիտղոսաթերթ: (1ժամ)
5. Classroom Ֆայլերի ներբեռնում: (1 ժամ)
6. Classroom Ֆայլերի տեղադրում: (1 ժամ)
7. Classroom Հայտարարության ստեղծում: (1 ժամ)
8. Ինքնուրույն աշխատանք: (2 ժամ)
9. Էլեկտրոնային գրատախտակ: Տեխնիկական բնութագրեր, աշխատանքային սկզբունքներ, անհրաժեշտ պայմաններ Google jamboard, sketchpad-ի, Flow!Works օրինակներով: Ուսումնական գործընթացում էլեկտրոնային գրատախտակի կիրառման եղանակը: (4 ժամ)
10. Հեռավար հարթակներ: (1 ժամ)
11. Quizizz, Mentimeter, Learningapps –ի կիրառում և դրանց գործիքամիջոցների հիմնական գործառնությունները: (5 ժամ)

Google forms, Google jamboard (16ժամ)

Նպատակը- Սովորողները՝ կիրառելով արդյունավետ տեխնոլոգիաներ կանոթանան թվային առաջադրանքների, տեսադասերի մշակման արդի գործիքներին:
Էլեկտրոնային գրատախտակի տեխնիկական բնութագրեր, աշխատանքային սկզբունքներ, անհրաժեշտ պայմաններ Google jamboard, sketchpad-ի, Flow!Works օրինակներով:
էլեկտրոնային գրատախտակի կիրառման եղանակներ:
Սովորեցնել ստեղծել սեփական էլեկտրոնային թղթապակաները, կայքերը(առանց ծրագարվորման որևէ լեզվի տիրապետման) կամ վարել բլոգներ:

Խնդիրներ -Թեստերի, հարցումների կազմակերպումը Google forms միջավայրում
Ուսուցման գործընթացում էլեկտրոնային գրատախտակի կիրառման եղանակներ: (ինքնուրույն աշխատանք):

Վերջնարդյունք- Կտիրապետեն՝ կրթական կայքերի, կրթական ռեսուրսների կիրառման հնարավորություններին
Առցանց հաղորդակցման հարթակի ստեղծում
Թվային առաջադրանքների ստեղծման արդյունավետ գործիքների կիրառում

Բովանդակություն

1. iSpring QuizMaker, Classroom Forms (4 ժամ)
2. Google Classroom խմբի ստեղծում , Classroom էջի ձևավորում, GoogleMeet : (5 ժամ)
3. Classroom տիտղոսաթերթ (1 ժամ)
4. Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները (2 ժամ)
5. Որևէ կրթական կայքի ներկայացում սահիկաշարի միջոցով (1 ժամ)
6. Ինքնուրույն աշխատանք: (3 ժամ)

Մեդիատեխնոլոգիաներ- մեդիագրագիտություն (26 ժամ)

Նպատակը-- Քննադատական և ստեղծագործական մտածողության խթանում

- Անկաշկանդ միջավայրի ստեղծում
- Ակտիվության խրախուսում:
- Անձնական նախաձեռնողականության բարձրացում
- Նախնական նպատակի հստակ իրականացում
- Երեխաների՝ որպես անհատ և քաղաքացի որակների զարգացում

Խնդիրներ Քննարկումների անցկացում, Ո՞ր դեպքե րում էր այդ տե ղե կությունը հետաքրքիր կամ պետքական,ո՞ր դեպքե րում՝ ա վե լորդ կամ ան պետք, Ինչ՞պես վերլուծել տեղեկությունները

Վերջնարդյունք - Քննադատաբար վերլուծելու կարողություններ

- Կարծիքը փաստից տարբերելու կարողություններ
- Էթիկայի կանոնները պահպանելու գիտակցություն
- մեդիագրագիտության կիրառման գործնական հմտություններ
- Տեղեկությունների վերլուծում, տեղեկությունը ստուգելու
- Սեփական հիմնավորված որոշման կայացում
- Քննադատական մտածողություն
- Այլոց կարծիքների, արժեքների նկատմամբ քննադատական մոտեցում

Բովանդակություն

Մեդիագրագիտության հմտությունների զարգացումը: (2 ժամ)
Ինչպե՞ս բացահայտել սուտ լուրը: Լուրի ստեղծման դրդապատճառը: (2 ժամ)
Ի՞նչ է գովազդը: Ու՞մ է պետք գովազդը: ՁԼՄ-նե րին ի՞նչ է տալիս գովազդ ունենալը:
«Ինչպես է պատրաստվում գովազդը» տեսանյութը : Քննարկել տեսանյութն ու դրանում ցուցադրվող գովազդը: (4 ժամ)
ԴԻՏՈՒՄ- քննարկում
Փաստերի ստուգում համեմատում: (2 ժամ)
Ստուգիր մինչև գրելը,տարածելը, հավանելը: (2ժամ)
Ի՞նչ ենք դիտում, լսում, կարդում, ին՞չու: (2 ժամ)
Քննարկում
Ո՞ր տեղեկությունն է լուր: Ինչպե՞ս վերլուծել տեղեկությունները: (2ժամ)
Ինքնուրույն աշխատանք: (2ժամ)
Քննարկում
Եղեք մեդիագրագետ, որ ձեր գլխին չբերեք աղետ: (1 ժամ)
Ինչ նպատակ ունի տվյալ նյութը: Ո՞ր դեպքում է այդ տեղեկությունը հետաքրքիր կամ պետքական, ո՞ր դեպքում ավելորդ և անպետք: (3 ժամ)
Սոցիալական մեդիա: (2ժամ)
Էթիկայի կանոնները պահպանելու գիտակցություն(2ժամ)